# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 3 » մարտի 2016թ.

**Հաստատում եմ՝**
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-17/16 բողոքը քննող
հանձնաժողովին

## Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի 19.02.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 19.02.2016թ. ներկայացրած բողոքով «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 11 չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ն:

Պատվիրատուի կողմից հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ստանալու համար Ընկերության նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը: Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պատասխանում նշվել է 414 000 դրամ, որը ակնհայտ քիչ է եղել, այն վերաբերել է միայն 2015թ-ի առաջին եռամսյակին: Իսկ Ընկերության հետագա ամիսների եկամուտները կազմել են 135787289 դրամ: Ընկերությունը նշում է, որ այդ եկամուտների մասին տեղեկատվությունը ՀՀ ֆինանսների նախարարությունը կունենար միայն Ընկերության կողմից շահութահարկի մասին տարեկան հաշվետվությունը հանձնելուց հետո, ինչի համար օրենքով նախատեսված ժամանակը սահմանված է մինչև սույն թվականի ապրիլի 15-ը:

Ավելին, Ընկերությունը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, առանց հաշվի առնելու, որ կազմակերպությունը դեռ չի հանձնել հաշվետվությունը, որտեղ կարող էին արտացոլվել հավանական եկամուտները, առանց վերապահումների պատասխան նամակով տրամադրել է թերի ինֆորմացիա, որն էլ պատճառ է դարձել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը մերժելու համար:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից առանց հիմնավոր ապացույցների կայացրած որոշման պատճառով, անարդարացիորեն վնաս է հասցվել Ընկերության շահերին՝ նրան զրկելով հաղթողի իրավունքից:

Ընկերությունը անհապաղ կերպով կազմել և «Կենտրոն» հարկային տեսչությանը հանձնել է տարեկան շահութահարկի վերաբերյալ հաշվետվությունը, որը հաստատվել է «Կենտրոն» հարկային տեսչության կողմից: Ավելին, Ընկերությունը 26.02.2016թ. թիվ 09/016 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով տրամադրել «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի մեծությունը:

Ի լրումն ներկայացված բողոքի՝ Ընկերությունը 03.03.2016թ. թիվ 09/3062-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության 02.03.2016թ. թիվ 1/73-1/7962-16 գրությունը, որով հայտնել է որ, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար հիմք է ընդունվում գնումների գործընթացի մասնակցի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի համաձայն՝ հաշվետու տարին սկսվում է տվյալ հաշվետու տարվա առաջին ամսվա 1-ից և ավարտվում է տվյալ հաշվետու տարվա վերջին ամսվա վերջին օրով:

Վերոհիշյալ գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անկախ հաշվետվությունների ներկայացման ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետներից, եզրակացության կազմման ժամանակ հիմք է ընդունվում գնումների գործընթացի մասնակցի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը: Եզրակացության մեջ յուրաքանչյուր հաշվետու տարվա համախառն եկամտի գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվարկները:

Միաժամանակ, ՀՀ ֆինանսների նախարարությունը տրամադրել է Կենտրոնի հարկային տեսչությունից ստացված տեղեկատվությունը «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի վերաբերյալ՝ ըստ որի այն կազմել է 136.231.829 դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ կետով՝ «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ն խնդրել է կիրառել ժամանակավոր կանխարգելիչ միջոցներ, որոնք ուղղված կլինեն «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ միջոցներ, որոնք ուղղված կլինեն գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի գնահատման հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն: Միաժամանակ Ընկերությունը խնդրել է դադարեցնել գնումների գործընթացի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը, ինչպես նաև չեղյալ հայտարարել կնքված պայմանագիրը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 25.02.2016թ. ժամը 15:00-ին ԳԲԽ-17/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի տնօրենը բողոքը պնդել է ամբողջությամբ:

## 2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.03.2016թ. թիվ ԴՎԱ/510 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի փաստաթղթերի պատճենները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունվարի 15-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 03.02.2016թ. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 19-րդ, 21-րդ, 29-րդ, 30-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն 04.02.2016թ. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. փետրվարի 10-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ 08.02.2016թ. ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով նախատեսված եզրակացությունը, համաձայն որի Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող 3 հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ներկայացրած գնային առաջարկից:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 25.02.2016թ. ժամը 15:00-ին ԳԲԽ-17/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը պարզաբանել է, որ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է եղել ներկայացրած գնային առաջարկից:

**3. <u>ԳԲԽ-17/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ԳԲԽ-17/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

**1.** ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

**2.** Ընթացակարգի 11 չափաբաժիններին մասնակցելու նպատակով **15.01.2016թ.** հայտ է ներկայացրել նաև «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ն:

**3.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 15.01.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրությամբ 19-րդ, 21-րդ, 29-րդ, 30-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ն:

**4.** Պատվիրատուն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 04.02.2016թ. կատարած հարցմամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ընկերության կողմից 2016թ. հունվարի 15-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

**5.** Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 414.000 ՀՀ դրամ:

**6.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. փետրվարի 10-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող 3 հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ներկայացրած գնային առաջարկից (11 չափաբաժինների մասով կազմել է 68.557.038 ՀՀ դրամ):

**7.** Ընկերությունը 26.02.2016թ. թիվ 09/016 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով տրամադրել Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող 3 հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումար:

**8.** ՀՀ ֆինանսների նախարարությունը 02.03.2016թ. թիվ 1/73-1/7962-16 գրությամբ տրամադրել է Կենտրոնի հարկային տեսչությունից ստացված տեղեկատվությունը, համաձայն որի Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող 3 հաշվետու տարիների (2013թ., 2014թ., և 2015թ.) համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 136.231.829 ՀՀ դրամ:

**4. <u>ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի 19.02.2016թ. ներկայացրած բողոքը, 03.03.2016թ. թիվ 09/3062-16 ներկայացված գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 02.03.2016թ. թիվ ԴՎԱ/510 գրությամբ ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նույն Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը: Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ֆինանսական միջոցներ չափորոշիչը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված

հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. փետրվարի 10-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» չափանիշը չեն բավարարում հրավերի պահանջներին, մասնավորապես, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան, 08.02.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության համաձայն՝ Ընկերության կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է եղել ներկայացված գնային առաջարկից: Մասնավորապես, Ընկերության նախորդող երեք հաշվետու տարիների (2013թ., 2014թ., և 2015թ.) համախառն եկամտի հանրագումարը կազմել է 414.000 ՀՀ դրամ, իսկ Ընկերության ներկայացված գնային առաջարկը (11 չափաբաժինների մասով) կազմել է 68.557.038 ՀՀ դրամ: Արդյունքում, մասնակցի հայտը մերժվել է:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ շահութահարկի մասին հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը և մինչև Ընկերության կողմից հայտ ներկայացնելը համապատասխան հաշվետվությունը չի ներկայացրել, ինչի արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն Ընկերության համախառն եկամտի մեծությունը նշվել է 414 000 դրամ, որն ակնհայտ քիչ է եղել և վերաբերվել է միայն 2015թ.-ի առաջին եռամսյակին:

Ընկերությունը 06.02.2016թ. թիվ 09/016 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով տրամադրել նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը: ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոն հարկային տեսչությունից ստացված տեղեկատվությունը 02.03.2016թ. թիվ 1/73-1/7962-16 գրությամբ տրամադրել է Ընկերությանը, համաձայն որի Ընկերության՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է **136.231.829** ՀՀ դրամ:

Միաժամանակ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անկախ հաշվետվությունների ներկայացման ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետներից, եզրակացության կազմման ժամանակ հիմք է ընդունվում գնումների գործընթացի մասնակցի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը: Եզրակացության մեջ յուրաքանչյուր հաշվետու տարվա համախառն եկամտի գումարը հաշվարկվում է հիմք ընդունելով հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվարկները:

Այսպիսով, շահութահարկի մասին հաշվետվությունը հանձնելուց հետո, Ընկերության նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 136.231.829 ՀՀ դրամ, որը պակաս չէ Ընկերության ներկայացրած գնային առաջարկից՝ 68.557.038 ՀՀ դրամից: Այսինքն, Ընկերության «Ֆինանսական միջոցներ» չափանիշը բավարարում է հրավերի պահանջներին, հետևաբար Ընկերության հայտը ենթակա չէ մերժման: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ բողոքը այս մասով ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած՝ կնքված պայմանագիրը չեղյալ հայտարարելու պահանջին, ապա հայտնում ենք, որ Ընկերության այս պահանջը ենթակա է մերժման, քանի որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման որոշում կայացնելու իրավունք ունի.

ա. եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց սույն օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. սույն օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին 50 նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

Քանի որ նշված հիմքերից որևէ մեկը առկա չէ, ուստի գտնում ենք, որ բողոքը այս մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի 19.02.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

- Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. փետրվարի 10-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով՝ «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:
- Պայմանագիրը չեղյալ հայտարարելու պահանջը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-17/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Կատվալյան